

քին վրայ, ինքնագիր հետևեալ տողն ունի. «Տէր Յս. ողորմեա
Կրպ. վրդ. ին եմագո»: Եմացո (Երուսաղէմացի) բառը հոս ալ կըրկ-
նած է. իր անձին համար քանիցս այս մակդիրը զօրծածող ան-
ձը ի՞նչպէս կրնայ այլուր փոխել Տոսպեցիի. ըստ իս այս հաւա-
նական չէ. յետոյ Երուսաղէմացին իր յիշատակարանին մէջ կը
յիշէ նաեւ Գեթսեմանիի Ս. Կուսի տաճարին նորոգութիւնը,
ինչ որ չի յիշեր Տոսպեցին. այդ պատճառաւ Երուսաղէմացին
Տոսպեցիին հետ նոյնացնելու հակամէտ չըլլալով մեր «Միաքսնի
եւ Այցեղոյի Հայ Երուսաղէմի» աշխատութեան մէջ զատ զատ ան-
ձեր ներկայացուցինք ծանօթութեամբ մը (էջ 200), և վերջնա-
կան ճշգուծը պիտի կատարենք այն ատեն երբ Երուսաղէմացիին
սպրած թուականը կարողանանք հաստատել:

Ս. Փրկչի վանքին վերաշինութեան այս թուականէն սկսեալ
վանքին մէջ կը ծաղկի գրչագրութեան արուեստը և յետագայ
դարերու մէջ ալ կը յարտանէ: Այսպէս 1363ին Կիրակոս Գրիչ իր
Աստուածաշունչի ԺԲ. Մարգարէից գիրքերը կ'ընդօրինակէ նոյն
վանքին մէջ ու իր յիշատակարանին մէջ կը յիշէ վանքին վա-
նահայր Ներսէս վրդ.ը ու անոր ծնողքը և ուրիշ միաբաններ:
Կիրակոս գրիչ յետոյ նոյն Աստուածաշունչը հետը Կտուց անա-
պատ տարած է (Տէս Միաքսնի եւ Այցեղոյի և ին. էջ 205):

1355ին Ճառլնիսի մը, և 1363ին Սարգիս գիրի մը կ'ընդօրին-
ակէ Ստեփանոս երեց նոյն վանքին մէջ. յիշեալ գրիչը Ս. Յակո-
բի մէջ եւս ուրիշ ընդօրինակութիւններ կատարած է (անդ, էջ
483): 1398ին Սահակ արեղայ Դրիւնցի կ'ընդօրինակէ Ճառլնիսի
մը, և կը նուիրէ Ս. Փրկչի վանքին: Իր յիշատակարանին մէջ
կը յիշատակէ իր ժամանակակից միայնակեցնները. Գառնայ միայ-
նակեաց, Աստուածասուր դոնապան: Յովհաննէս ակնճաւ, Յովհաննէս
բրդազործ, Արեւ միայնակեաց, Յովհաննէս Շտնախեցի և Յակոբ դպիր
(անդ, էջ 434): 1424ին Յովհաննէս արեղայ հոն կ'ընդօրինակէ
Սարգիս գիրի մը և յիշատակ կու տայ զայն Ս. Փրկչի վանքին (անդ,
էջ 351-52):

1355 ի վերաշինութենէն 125 տարի վերջ 1478ին, ըստ Ֆապ-
րիի Ուղեգրութեան, զոր վերեւ յիշեցինք, Ս. Փրկչի վանքը ծա-
խու կը հանուի պարտքի համար. բայց Հայաստանցի անանուն
ուխտաւոր մը պարտքերը կը վճարէ, վանքը կը նորոգէ եւ կը
յանձնէ Միաբանութեան: Հոգեւոյս Տ. Դուրեան Սրբազան այս